

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Թերեզա Ամրյան
Վարդան Ոսկանյան

ՔՐԴԵՐԵՆԻ
ԴԱՍԱԳԻՐՔ
(Կուրսման ջի)

հատոր II

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 811.222.5(075.8)

ԳՄԴ 81.521.313g73

Ա 536

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:*

Խմբագիրներ՝ քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սալբե Ակին
քանասիրական գիտությունների թեկնածու
Նազիկ Հովհաննիսյան

Գրախոս՝ քանասիրական գիտությունների թեկնածու
Հակոբ Ավյան

Ամրյան Թ., Ոսկանյան Վ.

Ա 536 Քրդերենի դասագիրք / Թ. Ամրյան, Վ. Ոսկանյան: -Եր., ԵՊՀ
հրատ., հատոր II, 2025, 322 էջ:

«Քրդերեն» (կուրմանջի) դասագրքի երկրորդ հատորը բաղկացած է հիսունչորս դասից, որոնցում ներառվել են լեզվի քերականական մի շարք կարգեր, որոնք տեղ չեն գտել դասագրքի առաջին հատորում: Ամեն մի դասին կից ներկայացվում են քերականական ձևերը յուրացնելու համար անհրաժեշտ տեքստեր ու վարժություններ:

Դասագիրքը նախատեսվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում, ինչպես նաև ուսումնական այլ հաստատություններում և գիտական կենտրոններում քրդերեն ուսումնասիրող արևելագետների, լեզվաբանների, իրանական լեզուներով հետաքրքրվող մասնագետների համար:

ՀՏԴ 811.222.5(075.8)

ԳՄԴ 81.521.313g73

ISBN 978-5-8084-2703-7

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808427037>

© ԵՊՀ հրատ., 2025

© Ամրյան Թ., Ոսկանյան Վ., 2025

ZANÎNGEHA YEREVANÊ YA DEWLETÊ

Têrêza Amryan
Vardan Voskanyan

PIRTÛKA DERSA
KURDÎ
(Kurmancî)

CILDA DUYEM

YÊRÊVAN
Weşanxana Zanîngeha Yêrêvanê ya Dewletê
2025

Editors: Doctor in Philology, Professor *Salih Akin*
Candidate of Philological Sciences *Nazik Hovhannisyan*

Reviewer: Candidate of Philological Sciences *Hakob Avchyan*

Amryan T., Voskanyan V.

Kurdish Textbook / T. Amryan, V. Voskanyan. -Yerevan: YSU Press, Cilda
Duyem, 2025, 322 pp.

The second volume of the Kurdish (Kurmanji) textbook expands on the first, offering 54 lessons that cover additional grammar points not found in the first volume. Each lesson includes texts and exercises designed to help learners master the grammatical concepts.

This textbook is intended for a variety of users, including those studying Kurdish at Yerevan State University, other educational institutions, and research centers, particularly those focused on Oriental Studies and linguistics.

© YSU Press, 2025

© Amryan T., Voskanyan V., 2025

Բովանդակություն

Նախաբան	10
Դաս 1	
Հոգնակի թվի արտահայտումը կուրմանջիում	12
Դաս 2	
Անկատար անցյալ (անանցողական և անցողական բայեր)	19
Դաս 3	
Անկատար անցյալ (<i>karin, zanîn, danîn</i> բայեր)	27
Դաս 4	
Անկատար անցյալ (պատճառական բայեր).....	31
Դաս 5	
Անկատար անցյալ (բաղադրյալ բայեր)	37
Դաս 6	
Բայի ներկայի հիմքը	46
Դաս 7	
Անկատար ներկա (պարզ բայեր)	52
Դաս 8	
Անկատար ներկա (<i>karin, zanîn, hatin, anîn, danîn, êxistin</i> բայեր).....	62
Դաս 9	
Անկատար ներկա (պատճառական բայեր).....	71
Դաս 10	
Իզաֆեթային շղթա	76
Դաս 11	
Անկատար ներկա (բաղադրյալ բայեր)	82
Դաս 12	
Հրամայական եղանակ (պարզ բայեր)	91
Դաս 13	
Հրամայական եղանակ (<i>çûn, hatin, gotin, karin, zanîn, anîn, danîn, bûn, heyîn, xistin, êxistin</i> բայեր)	98
Դաս 14	
Հրամայական եղանակ (պատճառական բայեր).....	104
Դաս 15	
Համադասական շաղկապներ.....	107
Դաս 16	
Կոչական	111

Դաս 17	
Հրամայական եղանակ (նախածանցավոր բայեր).....	115
Դաս 18	
Հրամայական եղանակ (նախդրավոր բայեր)	118
Դաս 19	
Հրամայական եղանակ (բարդ բայեր).....	123
Դաս 20	
Ըղձական ապառնի (պարզ բայեր).....	128
Դաս 21	
Ըղձական ապառնի (<i>չճն, hatin, gotin, karin, zanĭn, anĭn, danĭn, bĭn, heyĭn, xistin, ěxistin</i> բայեր).....	136
Դաս 22	
Ըղձական ապառնի (պատճառական բայեր)	147
Դաս 23	
Ըղձական ապառնի (նախածանցավոր բայեր)	153
Դաս 24	
Ստորադասական շաղկապներ	159
Դաս 25	
Ըղձական ապառնի (նախդրավոր բայեր)	164
Դաս 26	
Եղանակավորող բառեր և արտահայտություններ.....	169
Դաս 27	
Ըղձական ապառնի (բարդ բայեր).....	173
Դաս 28	
Ապակատար ներկա (պարզ բայեր).....	178
Դաս 29	
Ապակատար ներկա (<i>չճն, hatin, gotin, karin, zanĭn, anĭn, danĭn, bĭn, heyĭn, xistin, ěxistin</i> բայեր)	185
Դաս 30	
Ապակատար ներկա (պատճառական բայեր)	195
Դաս 31	
Ապակատար ներկա (նախածանցավոր բայեր)	199
Դաս 32	
Ապակատար ներկա (նախդրավոր և բարդ բայեր).....	203
Դաս 33	
Բայի անդեմ ձևեր (դերբայներ).....	208

Դաս 34	
Վաղակատար ներկա (անանցողական և անցողական բայեր)	211
Դաս 35	
Վաղակատար ներկա (<i>karin, zanîn, bûn, heyîn</i> բայեր)	218
Դաս 36	
Վաղակատար ներկա (պատճառական բայեր)	222
Դաս 37	
Վաղակատար ներկա (բաղադրյալ բայեր)	227
Դաս 38	
Վերաբերական	231
Դաս 39	
Վաղակատար անցյալ (անանցողական և անցողական բայեր)	235
Դաս 40	
Վաղակատար անցյալ (պատճառական բայեր)	241
Դաս 41	
Վաղակատար անցյալ (բաղադրյալ բայեր)	245
Դաս 42	
Բայասեռի կարգը քրդերենում	250
Դաս 43	
Չայնարկություններ	255
Դաս 44	
Ըղձական անցյալ (անանցողական և անցողական բայեր)	260
Դաս 45	
Ըղձական անցյալ (<i>karin, zanîn, bûn, heyîn</i> բայեր)	267
Դաս 46	
Ըղձական անցյալ (պատճառական բայեր)	274
Դաս 47	
Ըղձական անցյալ (նախածանցավոր բայեր)	278
Դաս 48	
Ըղձական անցյալ (նախդրավոր և բարդ բայեր)	283
Դաս 49	
Ապակատար անցյալ (անանցողական և անցողական բայեր)	288
Դաս 50	
Ապակատար անցյալ (<i>karin, zanîn, bûn, heyîn</i> բայեր)	293
Դաս 51	
Ապակատար անցյալ (պատճառական բայեր)	299

Դաս 52	
Ապակատար անցյալ (նախածանցավոր բայեր)	303
Դաս 53	
Ապակատար անցյալ (նախդրավոր և բարդ բայեր).....	308
Դաս 54	
Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր	312
Օգտագործված գրականություն.....	320

Համառոտագրություններ

բոց. - բառացի

նշ. - նշանակություն

հմմտ. - համեմատություն

կուրմ. - կուրմանջի

քրդ. - քրդերեն

հ. - հատոր

Նախաբան

«Քրդերեն» (կուրմանջի) դասագրքի երկրորդ հատորում ներկայացվում են քերականական այն կարգերը, որոնք արտացոլված չեն առաջին հատորում: Այսպիսով՝ «Քրդերեն» (կուրմանջի) դասագրքի երկրորդ հատորը դասագրքային ձևաչափով ամբողջացնում է այս լեզվի քերականությունը: Քրդերենի բարբառային համակարգը, լեզվի ուսումնասիրման պատմությունը, ինչպես նաև դասագրքի երկու հատորներում քերականությունը ներկայացնելու սկզբունքը համապարփակ գետեղված է դասագրքի առաջին հատորի նախաբանում (Ամրյան Թ., Ոսկանյան Վ., Քրդերենի (կուրմանջի) դասագիրք, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2023):

Դասագրքի երկրորդ հատորը լրացնում է առաջին հատորի քերականական ու բառապաշարային նյութը և միտված է ուսանողի լեզվական գիտելիքներն առավել ամբողջական դարձնելուն: Քերականական թեմաներին կից տեքստերի և վարժությունների մի մասը կազմել են հեղինակները, մյուսը վերցվել է գրականության ցանկում նշված տարբեր աղբյուրներից:

Դասագրքի երկրորդ հատորում քրդերենի լատինատառ այբուբենի մի շարք տառերի շնչեղությունը արտացոլող ապաթարցը չի օգտագործվել (p', t', k', r', x', ç', h', e'), քանի որ քրդերենի արդի գրական լեզուն ներկայացնող մամուլում, գեղարվեստական ստեղծագործություններում և այլ ոլորտներում այն չի կիրառվում: Բացի դրանից՝ նկատի է առնվում, որ առաջին հատորն ուսումնասիրելուց հետո սովորողն արդեն պետք է ձեռք բերած լինի համապատասխան հմտություններ և բառապաշարային ծավալ՝ տարանջատելու ձայնեղ, պարզ խուլ, շնչեղ խուլ, հազագային հնչյունները:

Տեքստերում և վարժություններում նաև կիրառվել են կուրմանջիի տարբեր խոսվածքներում, գրականության մեջ և մամուլի լեզվում միևնույն բառի տարբերակները կամ միևնույն արտահայտության տարբերակները: Օրինակներ՝

alîkarî	arîkarî	օգնություն
bahar	bihar	գարուն
malbat	malbet	ընտանիք
name	neme	նամակ
sehet	saet	ժամ
çev	çav	աչք

rûvî	rovî	աղվես
qayl	qayîl	համաձայն
cî	cîh	տեղ
edet	adet	սովորույթ
suhbet	sohbet	զրույց
mejû	mejî	ուղեղ
xwendekar	xwendikar	ուսանող
xwestin	xwastin	ցանկանալ, խնդրել
guhastin	guhartin	փոխել
usa	wisa	այսպես
edebyat	edebiyet	գրականություն
berbi	ber bi	դեպի
berev kirin	berhev kirin	հավաքել
derbaz bûn	derbas bûn	անցնել
fehm kirin	fam kirin	հասկանալ
nişkêva	jî nişkê ve	հանկարծ
Ew diaxivin.	Ew diaxêvin	Նրանք խոսում են:

Տարբեր խոսվածքներում առկա նմանատիպ ձևերի յուրացումն ու կիրառումը ուսանողին հնարավորություն կընձեռեն ավելի հեշտ ընկալելու ոչ միայն մամուլի լեզուն, այլև առավել արագ հասկանալու քրդերենի կուրմանջի բարբառի տարբեր խոսվածքներ կրողներին:

Դաս 1

Հոգնակի թվի արտահայտումը կուրմանջիում

Գոյականին հատուկ է թվի քերականական կարգը:

1. Քրդերենի կուրմանջի բարբառում գոյականի եզակի կամ անորոշ լինելը արտահայտվում է **-ek** վերջավորությամբ:

malek	մի տուն
jinek	մի կին

Օրինակներ՝

Min carek ew keç dît.	Ես մի անգամ այդ աղջկան տեսա:
Birayê min rojek di mala min de ma.	Եղբայրս մի օր իմ տանը մնաց:

2. Ուղիղ հոլովաձևով հոգնակի գոյականները չեն ստանում հոգնակերտ: Դրանց հոգնակի լինելն արտահայտվում է բայ-հանգույցով կամ դիմային վերջավորությամբ: Օրինակներ՝

Pirtûk li vir in .	Գրքերն այստեղ են:
Zarok ji deştê hat in .	Երեխաները դաշտից եկան:
Min ser darê du çivîk dît in .	Ես ծառի վրա երկու թռչուն տեսա:
Min cil kir in .	Ես հագուստներ գնեցի:
Ew keç hat in .	Այդ աղջիկները եկան:

3. Թեք հոլովաձևով հոգնակի գոյականները ստանում են **-a** կամ **-an** հոգնակերտ¹:

Min sê cara (caran) ew keç dît.	Ես երեք անգամ այդ աղջկան տեսա:
Ew pênc saeta (saetan) derva ma.	Նա հինգ ժամ դրսում մնաց:
Ez meriva (merivan) dibînim.	Ես մարդկանց եմ տեսնում:
Ew mirîşka (mirîşkan) difiroşe.	Նա հավեր է վաճառում:
Zinet (kulîlka) kulîlkan berhev dike.	Զինատը ծաղիկներ է հավաքում:
Dema ez zarok bûm, ez hildikişiyam ser (daran) daran.	Երբ ես երեխա էի, ես ծառ էի բարձրանում (բոց.՝ բարձրանում էի ծառերի վրա):
Ez (cila) cilan dikirim.	Ես հագուստներ եմ գնում:
Ez hacetan hazir dikim.	Ես պատրաստում եմ գործիքները:

¹ Որոշ խոսվածքներում **-a** կամ **-an** հոգնակերտն առկա է **-ana** ձևով:

ա) Եթե գոյականը վերջանում է ձայնավորով, ապա հոգնակերտի և գոյականի միջև դրվում է **y** կիսաձայնը:

Ew piştî du heftê ya (heftê yan) hat.	Նա երկու շաբաթ անց եկավ:
Çi mezin û çi biçûk, her kes li ser (pî ya) pî yan bû.	Մեծ ու փոքր բոլորը ոտքի էին կանգնել (բոց.՝ ոտքի վրա էին):

բ) Իզաֆեթային կառույցում հոգնակի հատկացուցիչն ու որոշիչը նույնպես ստանում են **-a** կամ **-an** հոգնակերտ:

zimanê kurda (zimanê kurda n)	քրդերի լեզուն
welatê ermenî ya (welatê ermenî yan)	հայերի երկիրը
otaxa zaroka (otaxa zaroka n)	երեխաների սենյակը

գ) Համեմատություն կատարելիս հոգնակի թվով է կիրառվում այն անձը կամ առարկան, որի հատկանիշը համեմատվում է:

Ew kalemêr mina zaroka n digirya.	Այդ ծերունին երեխայի պես արտասվում էր (բոց.՝ երեխաների պես լաց էր լինում):
Ew sêw wek tirî yan şîrin e.	Այդ խնձորը խաղողի պես քաղցր է (բոց.՝ խաղողների պես քաղցր է):

դ) Մի քանի ժամանակաձևերում անցողական բայի հետ որպես ենթակա կիրառվող գոյականը կարող է ստանալ **-a** կամ **-an** հոգնակերտ:

Անցյալ կատարյալ	Hostayan xanî ava kir.	Վարպետները տունը կառուցեցին:
Անկատար անցյալ	Hostayan xanî ava dik ir.	Վարպետները կառուցում էին տունը:
Վաղակատար ներկա	Hostayan xanî ava kir ye .	Վարպետները տուն են կառուցել:
Վաղակատար անցյալ	Hostayan xanî ava kiribû.	Վարպետները տուն էին կառուցել:
Ըղձական անցյալ	Xwezil hostey an xanî ava bikira.	Երանի վարպետները տունը կառուցեին:
Ապակատար անցյալ	Hostey an wê xanî ava bikira.	Վարպետները տունը կառուցելու էին:

ե) **-a** կամ **-an** հոգնակերտ կարող է ստանալ որպես ուղիղ, անջատման, հանգման անուղղակի խնդիր հանդես եկող հոգնակի գոյականը:

Ez pirtûka n dixûnim.	Ես գրքեր եմ կարդում:
Ez niha pirtûkê didim şagirta n .	Ես հիմա գիրքը տալիս եմ աշակերտներին:

Ezê pirtûkan bixûnim.	Ես գրքեր եմ կարդալու (Ես գրքեր կկարդամ):
Ezê pirtûkê bidim şagirtan.	Ես գիրքը տալու եմ աշակերտներին (Ես գիրքը կտամ աշակերտներին):
Ez pirtûkan bixwînim (bixûnim).	Ես գրքերը կարդամ:
Dube ku ez pirtûkê bidim şagirtan.	Երևի ես գիրքը տամ ուսանողներին:
Min ji xwendekaran pirtûk hilda.	Ես ուսանողներից գիրք վերցրի:
Pirtûkan (bixwîne) bixûne!	Գրքերը կարդա՛:
Pirtûkê bide şagirtan!	Գիրքը տո՛ւր աշակերտներին:

զ) *Ev/ew, evan/ewan* ցուցական դերանունների հետ կիրառվող հոգնակի գոյականը ստանում է **-a** կամ **-an** հոգնակերտ:

evan jinan	այս կանայք
evan kuran	այս տղաները
van jinan	այս կանանց
van kuran	այս տղաներին

3. Իզաֆեթային կառույցում հոգնակի հատկացյալն ու որոշյալը ստանում են **-ên** կամ **-êd** վերջավորությունները:

xûşkên min (xûşkêd min) ²	իմ քույրերը
pirtûkên te (pirtûkêd te)	քո գրքերը

Օրինակ՝

Gundî zevîyên xwe av nedan.	Գյուղացիները չջրեցին իրենց արտերը:
-----------------------------	------------------------------------

4. *Yên* կամ *yêd* (որոշ խոսվածքներում՝ **ên** կամ **êd**) հարաբերական դերանունը գործածելի է հոգնակի գոյականի հետ կիրառվող որոշիչի կամ հատկացուցիչի հետ:

birayên min yên mezin	իմ մեծ եղբայրները
hevalên min yêd baş	իմ լավ ընկերը

Օրինակ՝

Cînarêd min ên nû hatin mala min.	Իմ նոր հարևանները եկան իմ տուն:
-----------------------------------	---------------------------------

² **-êd** վերջավորությամբ ձևերը առավելապես տարածված են Բադինի քրդերի լեզվում, բայց և լայնորեն գործածված էր ԽՍՀՄ քրդերի գրական լեզվում (Курдоев К., Грамматика курдского языка (курманджи), Москва-Ленинград, 1957, стр. 54-55):

Yên կամ *yêd* հարաբերական դերանունը հաճախ կիրառվում է հոգնակի գոյականի փոխարեն (փոխանվանաբար):

– Ewan hevalên min in.	– Նրանք իմ ընկերներն են:
– Ewan hevalên kê ne? Yên min in.	– Նրանք իմ ընկերներն են: Իմն են:
– Ev malêd kê ne?	– Մրանք ո՞ւմ տներն են:
– Ev mal yêd te ne. Yêd te ne.	– Այս տները քոնն են: Քոնն են:

5. Անորոշ առումով հոգնակի գոյականը ստանում է **-ne** վերջավորություն:

kur ne aqil	խելացի տղաներ
qîz ne bedew	գեղեցիկ աղջիկներ

Օրինակ՝

Li gundê me mal ne rind hene.	Մեր գյուղում լավ տներ կան:
Cînarên me meriv ne baş in.	Մեր հակառակները լավ մարդիկ են:

6. Որպես կոչական կիրառվող հոգնակի գոյականը ստանում է **-no** վերջավորություն:

Xûşk no , werin!	Քույրե՛ր, եկե՛ք:
Keç ino , kurno, hûn ku derê ne?	Աղջիկնե՛ր, տղանե՛ր, ո՞ւր եք դուք:

7. Հոգնակի թվով չեն կիրառվում մի շարք անհաշվելի և վերացական գոյականներ.

rûn	յուղ
şîr	կաթ
av	ջուր
hewa	եղանակ
berf	ձյուն
hingiv	մեղր
şayî	ուրախություն
hevalî	ընկերություն

Կան որոշ բացառություններ: Օրինակներ՝

av ên şîrin	քաղցրահամ ջրեր (նշ.՝ քաղցրահամ աղբյուրներ, քաղցրահամ լճեր)
li ezmana	երկնքում (բոց.՝ երկինքներում)

Suhbeta Gazîn û Babîr

Gazîn: Rojbaş Babîr.
 Babîr: Rojbaş. Çawa yî, baş î?
 Gazîn: Spas dikim.
 Babîr: Gazîn, duh birayê te li zanîngehê nîbû.
 Gazîn: Erê, ew vê derê nîbû.
 Babîr: Te pirsî çika ew li ku bû?
 Gazîn: Erê, min pirsî.
 Babîr: Birayê te çi got?
 Gazîn: Wî got ku duh ew çû daristanê.
 Babîr: Ew çû daristanê çi bike?
 Gazîn: Ew çû nêçîrê.
 Babîr: Wî nêçîr kir?
 Gazîn: Na.
 Babîr: Çira?
 Gazîn: Duh bager bû.
 Babîr: Baran jî barî?
 Gazîn: Erê, birayê min bin baranê ma, şil bû.
 Babîr: Ne baş e!
 Gazîn: Erê, welleh!
 Babîr: Dibêjin ku duh na pêr jî wê derê erdhej bû.
 Gazîn: Erdhej? Te ji xîyala xwe anî?
 Babîr: Na, ew rast e: ji erdhejê çend zinar xirab bûn.

Նոր բառեր և արտահայտություններ

çika, çikanê	հապա, հապա մի
erdhej, belelerz	երկրաշարժ
Te ji xîyala xwe anî.	Դու հորինեցիր:

Վարժություն 1. Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Այս կանայք հաց թխեցին: 2. Այս գեղեցիկ կանայք նստեցին: 3. Դու քո մեքենան տվեցիր այդ տղամարդկանց: 4. Իմ եղբայրները այգում էին: 5. Ես կանանցից գիրք վերցրի: 6. Ես սովորեցի քրդերի լեզուն: 7. Իմ եղբայրները Ռուսաստանից եկան: 8. Սրանք ո՞ւմ գրքերն են: Իմ գրքերն են: Իմն են: 9. Ո՞ւմ եղբայրներն են: Իմ եղբայրներն են: Իմն են:

Վարժություն 2. Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Li bajaran sînema hene. 2. Li gundan sînema nînin. 3. Li bajaran bazarên mezin hene. 4. Li gundan bazarên mezin tunene. 5. Li gundan zevî û rez

hene. 6. Tu mîna kurda kurmancî diaxêvî. 7. Wê derê gundne mezin hene. 8. Lawê te li bazarê sêvan difroşe. 9. Keçikê gul berev kirin. 10. Keçekê ew meriv dîtîn. 11. Jîyana merivan kin e. 12. Wan kecan ez dîtîm. 13. Ez bi hevalan ra diçim dibistanê. 14. Keç wek kulîlkan bedew bûn. 15. Şehîd mîna şêran şer kir. 16. Ew cînar merivne baş bûn.

Parêzgeha Kotaykê

Parêzgeha Kotaykê di beşa navendî ya Komara Ermenistanê de ye. Kotayk ji alîyê bakûr ve bi Gûtanasarê, ji bakur-rojhilat ve bi çiyayên Hatîsê ve dorpêç dibe. Ev parêzgeh li başûr-rojava hêdî-hêdî nizm dibe û bi deşta Araratê re dibe yek.

Navenda Kotaykê bajarê Hirazdan e: navenda parêzgehê 45 kîlomêtran ji serokbajarê Ermenistanê dûr e. Mezinayîya vê parêzgehê 2089 kîlometre çargoşe ye. Ev parêzgeh di nav parêzgehên Ermenistanê de cîhê heştemîn digire.

Li vê parêzgehê Abovyan, Hirazdan, Çarêntsavan, Byûrêxavan bajarên herî mezin in.

Çemên Gêtar û Azat jî di Kotaykê re derbas dibin. Ev her du çem jî bo avdanê girîng in. Gola Aknayê jî di pergala avdanê de gelekî girîng e.

Rêyên hesinî yên Yêrêvan-Şorja û Hirazdan-Îcêvan nav parêzgeha Kotaykê re derbas dibin.

Parêzgeha Kotaykê di Komara Ermenistanê de yek ji mezintirîn navendên aborî ye. Li Hirazdanê santrala hêza germê û santrala hîdroêlêktrîkê heye.

Ev parêzgeh ji alîyê cîhên dîrokî û çandî ve jî dewlemend e. Yek ji wan peristgeha Garnîyê ye. Keleha Bjniyê, komplêksa keşîşxaneyê Keçarîs û Gêxardavank ji serdema navîn in: ew pir balkêş û binavûdeng in.

Ji sedî nodê nifûsa parêzgehê ermenî ne. Lê vê derê usa jî êzdî, suryanî, rûs û kurd dijîn.

Նոր բառեր և արտահայտություններ

parêzgeh	մարզ
beş	հատված, բաժին
navend	կենտրոն
navendî	կենտրոնական
Ew dorpêç dibe.	Դա շրջապատված է:
kîlometre çargoşe	քառակուսի կիլոմետր
Ew cîyê heştemîn digire.	Դա զբաղեցնում է յոթերորդ տեղը:
avdan	ոռոգում

pergal	համակարգ
aborî	տնտեսություն
hêz	ուժ
santrala hêza germê	ջերմաէլեկտրակայան
santrala hîdrolektrîkê	ջրաէլեկտրակայան
çand	մշակույթ
keşîşxane	վանք
komplêksa keşîşxaneyê	վանական համալիր
serdema navîn	միջնադար

Ժողովրդական ասացվածքներ

Diza ji diza dizî, erd û ezman tev lerizî.

Dûrî çeva – dûrî dila.

Emrê xayîna kurt e.

Rewşa çîya – bilindayî ye.

Rewşa daran – êmîş e.

Roje dûman e, kêfa guran e.

Zarê xweş – bahara dilan e.

Nava şerada zêra bela nakin.

Çara bêçara – Xwedê ye.

Kirinek ji deh gotinan çêtir e.

Դաս 2

Անկատար անցյալ (անանցողական և անցողական բայեր)

Սահմանական եղանակի անկատար անցյալ ժամանակաձևը ցույց է տալիս խոսելու պահից առաջ սկսված և չավարտված գործողություն, անցյալ ժամանակահատվածում որոշակի պահի կատարվող, ինչպես նաև անցյալում պարբերաբար կատարվող գործողություն: Հաճախ այս ժամանակաձևն անվանում են *անցյալ շարունակական*³:

Անանցողական բայերի անկատար անցյալը կազմվում է՝ բայի անցյալի հիմքին հավելելով *di-* նախամասնիկ⁴ և երկրորդ խմբի դիմային վերջավորություններ. ենթական կիրառվում է ուղիղ հոլովաձևով:

Երկրորդ խմբի դիմային վերջավորություններն են.

	Եզակի	Հոգնակի
I դեմք	-im	-in
II դեմք	-î(y)	-in
III դեմք	-	-in

Hatin (անցյալի հիմքը՝ **hat-**) բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Ez dihatim.	Ես գալիս էի:
II դեմք	Tu dihatî.	Դու գալիս էիր:
III դեմք	Ew dihat.	Նա գալիս էր:

I դեմք	Em dihatin.	Մենք գալիս էինք:
II դեմք	Hûn dihatin.	Դուք գալիս էիք:
III դեմք	Ew dihatin.	Նրանք գալիս էին:

Ժխտականը կազմվում է՝ խոնարհված բային ավելացնելով **ne-** նախամասնիկը.

I դեմք	Ez nedihatim.	Ես չէի գալիս:
II դեմք	Tu nedihatî.	Դու չէիր գալիս:
III դեմք	Ew nedihat.	Նա չէր գալիս:

³ Տե՛ս Կурдоев К., *Грамматика курдского языка на материале диалектов курманджи и сорани*, Москва, 1978, стр. 175; Կурдоев К., *Грамматика курдского языка (курманджи)*, Москва-Ленинград, 1957, стр. 183-185, 211; Бакаев Ч., *Язык курдов СССР*, Москва, 1973, стр. 183-184.

⁴ **Di-** նախամասնիկը արտահայտում է գործողության տևականություն, բազմակիություն, պարբերականություն, շարունակականություն:

I դեմք	Em ned i hatin.	Մենք չէինք գալիս:
II դեմք	Hûn ned i hatin.	Դուք չէիք գալիս:
III դեմք	Ew ned i hatin.	Նրանք չէին գալիս:

Եթե անանցողական բայի անցյալի հիմքը վերջանում է **a**-ով, **ê**-ով, **o**-ով կամ **û**-ով, ապա եզակի երկրորդ դեմքը բայի հիմքից հետո ստանում է **y** կիսաձայն, մյուս դիմային վերջավորությունների **i**-ն սղվում է:

Gerîn (անցյալի հիմքը՝ **gerya-**) բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Ez digeryam.	Ես զբոսնում էի:
II դեմք	Tu digeryay.	Դու զբոսնում էիր:
III դեմք	Ew digerya.	Նա զբոսնում էր:

I դեմք	Em digeryan.	Մենք զբոսնում էինք:
II դեմք	Hûn digeryan.	Դուք զբոսնում էիք:
III դեմք	Ew digeryan.	Նրանք զբոսնում էին:

Ժխտական խոնարհում

I դեմք	Ez nedigeryam.	Ես չէի զբոսնում:
II դեմք	Tu nedigeryay.	Դու չէիր զբոսնում:
III դեմք	Ew nedigerya.	Նա չէր զբոսնում:

I դեմք	Em nedigeryan.	Մենք չէինք զբոսնում:
II դեմք	Hûn nedigeryan.	Դուք չէիք զբոսնում:
III դեմք	Ew nedigeryan.	Նրանք չէին զբոսնում:

Անանցողական բայերը անկատար անցյալ ժամանակաձևով գործածվելիս ենթական չի ստանում հոգնակերտ: Ենթականի հոգնակի լինելն արտահայտվում է բային կցվող դիմային վերջավորությամբ.

Mêr dihatin .	Տղամարդիկ գալիս էին:
Zarok ned i hatin.	Երեխաները չէին գալիս:

Անանցողական բայերի խոնարհման ժամանակ տեղի պարագան կիրառում են թեք հոլովաձևով.

Ez diçûm dibistanê.	Ես գնացի դպրոց:
Ez diçûm Yêrêvanê.	Ես գնացի Երևան:
Hûn ji dibistanê derketin.	Դուք դպրոցից դուրս եկաք:
Ew ji Yêrêvanê diçûn Gyûmrîyê.	Նրանք Երևանից գնացին Գյումրի:

Եթե գործողությունը նշում է մի տեղից մեկ այլ վայր շարժում, ապա խոնարհված բային կարող է ավելանալ **-e** վերջավորություն: Այս տարբերակն առավելապես կիրառվում է ժողովրդախոսակցական լեզվում.

Ez her heftê diçûm gund.	Ez her heftê diçûme gund.	Ես ամեն շաբաթ գյուղ էի գնում:
Ez her roj dihatim xebatê.	Ez her roj dihatime xebatê.	Ես ամեն օր աշխատանքի էի գալիս:

Անցողական բայերի խոնարհման ժամանակ **di-** նախամասնիկը կցվում է բայի անցյալի հիմքին. դիմային վերջավորություններ չեն կիրառվում, ենթական թեք հոլովաձևով է:

Dîtin (անցյալի հիմքը **dît-**) բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min didît.	Ես տեսնում էի:
II դեմք	Te didît.	Դու տեսնում էիր:
III դեմք	Wî/wê didît.	Նա տեսնում էր:

I դեմք	Me didît.	Մենք տեսնում էինք:
II դեմք	We didît.	Դուք տեսնում էիք:
III դեմք	Wan didît.	Նրանք տեսնում էին:

Ժխտականը կազմվում է՝ խոնարհված բային հավելելով **ne-** նախամասնիկ:

I դեմք	Min nedidît.	Ես չէի տեսնում:
II դեմք	Te nedidît.	Դու չէիր տեսնում:
III դեմք	Wî/wê nedidît.	Նա չէր տեսնում:

I դեմք	Me nedidît.	Մենք չէինք տեսնում:
II դեմք	We nedidît.	Դուք չէիք տեսնում:
III դեմք	Wan nedidît.	Նրանք չէին տեսնում:

Եթե խոնարհվող բայը սկսվում է ձայնավորով, ապա **di-** նախամասնիկի **i-**ն սղվում է: Օրինակ՝ **avîtin** (անցյալի հիմքը **avît-**) բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min davît.	Ես նետում էի:
II դեմք	Te davît.	Դու նետում էիր:
III դեմք	Wî/wê davît.	Նա նետում էր:

I դերք	Me davît.	Մենք նետում էինք:
II դերք	We davît.	Դուք նետում էիք:
III դերք	Wan davît.	Նրանք նետում էին:

Առկա է նաև **diavît** ձևը:
Ժխտական խոնարհում

I դերք	Min nedavît.	Ես չեի նետում:
II դերք	Te nedavît.	Դու չեիր նետում:
III դերք	Wî/wê nedavît.	Նա չէր նետում:

I դերք	Me nedavît.	Մենք չէինք նետում:
II դերք	We nedavît.	Դուք չէիք նետում:
III դերք	Wan nedavît.	Նրանք չէին նետում:

ա) Անցողական բայերը անկատար անցյալ ժամանակաձևով խոնարհելիս իգական սեռի ենթական թեք հոլովաձևով է կիրառվում և ստանում է **-ê** ցուցիչ (արական սեռի ենթական նույնպես թեք հոլովաձևով է, բայց որևէ փոփոխություն չի կրում):

Hasmikê av dida min.	Հասմիկը ջուր էր տալիս ինձ:
Aram av dida min.	Արամը ջուր էր տալիս ինձ:
Aram neme dinivîsî.	Արամը նամակ էր գրում:
Keçikê av dibir.	Աղջիկը ջուր էր տանում:

բ) Անցողական բայերը անկատար անցյալ ժամանակաձևով խոնարհելիս հոգնակի ենթական ստանում է **-a** կամ **-an** հոգնակերտ:

Jinan av dibir.	Կանայք ջուր էին տանում:
Zaroka ders dixwend.	Երեխաները կարդում էին դասը:

գ) Անցողական բայերը անկատար անցյալ ժամանակաձևով խոնարհելիս ուղիղ խնդիրը ուղիղ հոլովաձևով է:

Min nan dixwar.	Ես հաց էի ուտում:
Min Astxîk didît.	Ես Աստղիկին էի տեսնում:
Cano ders dixwend.	Ջանոն դաս էր սովորում:

դ) Հանգման, անջատման անուղղակի խնդիրները, ինչպես նաև տեղի պարագան կիրառվում են թեք հոլովաձևով:

Min pirtûk dida Anahîtê.	Ես գիրքը տալիս էի Անահիտին:
Min ji Aanahîtê av dixwest.	Ես Անահիտից ջուր էի ուզում:

Min ji Anahîtê pirtûk hidilda .	Ես Անահիտից գիրք վերցրի:
Aram ji bazarê tişt dikirî.	Արամը շուկայից բան էր գնում:
Zarok li hewşê dilîst.	Երեխան խաղում էր բակում:

ե) Անցողական բայերը անկատար անցյալ ժամանակաձևով խոնարհելիս եթե հանգման ու անջատման անուղղակի խնդիրները հոգնակի են, ապա ստանում են **-a** կամ **-an** հոգնակերս:

Mamoste kitêb dida xwendekaran.	Ուսուցիչը գիրքը տալիս էր ուսանողներին:
Mamoste ji xwendekaran an kitêb hildida .	Ուսուցիչը ուսանողներից գիրք էր վերցնում:

զ) Արդեն նշվել է, որ անցողական բայերը անկատար անցյալ ժամանակաձևով խոնարհելիս դիմային վերջավորություններ չեն կիրառում: Պետք է նշել սակայն, որ քրդերենի կուրմանջի բարբառում առկա է **էրգա-տիվ կառույց**, որը նշանակում է, որ քրդերենում անցողական բայը կարող է ստանալ ուղիղ խնդիր լրացման վերջավորություն:

Min tu didîfî .	Ես քեզ տեսնում էի:
Min hûn didîtin .	Ես ձեզ տեսնում էի:
Te ez digirtim .	Դու ինձ բռնում էիր:
Min hûn digirtin .	Ես ձեզ բռնում էի:
Min sêv dixwarin .	Ես խնձորներ էի ուտում:
Min zarokên cînarên didîtin .	Ես հարևանների երեխաներին էի տեսնում:

է) Եթե գործողությունը հանգում է որևէ առարկայի կամ անձի (միայն եզակի III դեմքով արտահայտված), որը զեղչվում է, ապա խոնարհված բայը կիրառվում է նախադասության վերջում և ստանում է **-ê** ենկլիտիկ դերանուն: Էնկլիտիկ դերանունը կիրառվում է եզակի երրորդ դեմքի զեղչված անձնական դերանվան փոխարեն:

Min av dida wî/wê.	Ես ջուր էի տալիս նրան:
Min av didayê.	Ես ջուր էի տալիս[նրան]:
Min tişt digot Armên.	Ես բան էի ասում Արմենին:
Min tişt digotê.	Ես բան էի ասում [նրան]:
Dayîkê her roj nan dida wî/wê.	Մայրիկն ամեն օր հաց էր տալիս նրան:
Dayîkê her roj nan didayê.	Մայրիկն ամեն օր հաց էր տալիս [նրան]:

Երբեմն **gotin** բայը կարող է ստանալ **-e** վերջավորություն: Այս տարբերակն առավելապես կիրառվում է ժողովրդախոսակցան լեզվում:

Min digot te.	Min digote te.	Ես սսում էի քեզ:
---------------	----------------	------------------

Têhran

Par havînê ez li Têhranê bûm. Têhran şeherekî bedew e. Min wê derê dixwand û her roj diçûm zanîngehê. Di Têhranê de kolaneke mezin û dirêj hebû. Navê wê kolanê Ênxêlab bû. Di Ênxêlabê **de** dikanên pirtûkan hebûn. Li wir kitêbên rind difrotin. Zanîngeha Têhranê jî li Ênxêlabê bû.

Ez di mala hevalê xwe de dimam. Hevalê min faris nîbû, ew ermenî bû. Li Têhranê gelek millet û netew hebûn. Li wir faris jî, türk jî, kurd jî, yehûdî jî, ermenî jî hebûn.

Ermenî li sedsala 17-an çûn Îranê. Ew bi xwestina xwe neçûn: **wê** demê padîşahêkî Îranê hebû. Navê wî Ebas bû. Wî bi destê zorê ermenî çemê Eresê derbas kirin û birin Îranê.

Ermenî pêşekar û bazirganên baş bûn. Ew çûne Îranê, li bajarê Îsfahanê mal çêkirin, li wir xebitîn û man, lê zimanê xwe jî bîr nekirin û adetên xwe wenda nekirin. Naha li Îranê dibistan û dêrên ermenîyan hene.

Ez usa jî çûme bazara Têhranê. Bazara Têhranê pir mezin bû. Bazirganên Îranê pir jêhatî bûn. Li wê bazarê zêr, cil, parçe, xalîçe û tiştên cûre-cûre difrotin: hemû tişt arzan bû. Hinek xalîçe û parçe gelek beha (qîmetlû) bûn, çimkî pêşekar bi destan ew çêdikirin. Xalîçeyên Îranê mîna xalîçeyên ermenîyan bûn.

Ez çend rojan di bazara Têhranê de digeryam. Min her roj tiştên rind bona neferên malbeta xwe dikirîn. Min li Îranê gelek tiştên nû diditîn.

Նոր բառեր և կապակցություններ

destê zorê	բռնությամբ, բռնի ուժով
bazirgan	առևտրական
pêşekar	արհեստավոր

Վարժություն 1. Անկատար անցյալ ժամանակաձևով խոնարհել հետևյալ բայերն ու կազմել նախադասություններ:

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
վարել, քշել	ajotin	ajot-
բերել	anîn	anî-
տանել	birin	bir-

գնալ	çûn	çû-
բռնել	girtin	girt-
ասել	gotin	got-
փոխել	guhastin	guhast-
թողնել	hiştin (hîştin)	hişt- (hîşt-)
եփվել	kelîn	kelya-
ընկնել, մտնել	ketin	ket-
անել	kirin	kir-
գնել	kirîn	kirî-
նայել	nihêrîn	nihêrî-
գրել	nivîsîn	nivîsî-
հարցնել	pirsîn	pirsî-
թափել	rêtin	rêt-
ուղարկել	şandin	şand-
լվանալ	şûştin	şûşt-
վախենալ	tîrsîn	tîrsya-
աշխատել	xebitîn	xebitî-
կարդալ	xwendin (xwandin)	xwend- (xwand-)
ցանկանալ, ուզել	xwestin (xwastin)	xwest- (xwast-)
ամուսնանալ	zewicîn	zewicî-
շրջվել, պտտվել	zivirîn	zivirî-

Վարժություն 2. Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Xortan di dera werzişê de bi topê dilîst. 2. Zarok ser bûzê (ser cemedê) dişimitî. 3. Ez bê xizak dişimitîm. 4. Hûn duh dikenyan. 5. Silo li mêrgê dixebitî. 6. Duh êvarê, çaxê em dihatin, daristan dişewitî. 7. Min nan dixwar. 8. Wan şîrinayî nedida zarokê, çimkî diranê zarokê dêşya. 9. We zebeş dixwar. 10. Wan hingiv dixwar. 11. Mamoste tumê dipirsî “Tu rind dixûnî?” 12. Ez her roj diçûme mala xalê xwe. 13. Hevalê min her roj tevî min dihat dibistanê. 14. Duh êvarê jina nan dipet. 15. Min alîkarî ji te dixwest. 16. Wî rast digot. 17. Wê keçê gulên sor av dida. 18. Wî berê her roj bilûrê dixist. 19. Tajdîn carna diçû Yêrêvanê, carna jî diçû Tbilîsiyê. 20. Min carna erebe dajot.

Parêzgeha Şîrakê

Parêzgeha Şîrakê li bakûr-rojavayê Komara Ermenistanê ye. Navenda parêzgehê bajarê Gyûmrî ye. Gyûmrî li Ermenîstanê duyemîn bajarê mezin e. Gyûmrî 126 kîlometran dûrî Yêrêvanê ye.

Deşta Şîrakê di beşa navendî û başûrê parêzgeha Şîrakê de ye, zozanên Aşotskê li bakurê parêzgehê ne. Beşek ji rêzeçîyayên Pambakê û Bazûmê di parêzgeha Şîrakê de ne.

Di parêzgeha Şîrakê de Gyûmrî, Artîk, Maralîk bajarên mezin in. Bajarê Artîkê li quntara bakur-rojavayê çîyayê Aragatsê ye. Artîk 20 kîlômêtran ji Gyûmrîyê dûr e. Artîk ji aliyê mîneralan (wek tûf û bazalt) ve gelek dewlemend e, li wir kargeha “Artîktûf” dixebite ku di sala 1927an de hat çêkirin. Maralîk 27 kîlômêtran dûrî Gyûmrîyê ye.

Çemê herî dirêj ku di parêzgehê re diherike Axûryan e. Çemên Tsoxamarg, Îllî, Karkaçûn jî di nav xaka parêzgehê re derbas dibin. Arpî yekane gola parêzgehê ye.

Նոր բառեր

rêzeçîya	լեռնաշղթա
xak	հող
mehîr	սպաս, թանապուր

Վարժություն 3. Փակագծերում նշվող բայերը խոնարհել անկատար անցյալ ժամանակաձևով և նախադասությունները թարգմանել:

1. Min her roj serê xwe (şûştin). 2. Dema ez zarok bûm, min şîr (xwarin). 3. Par her roj ez li sûkê (rastî wî hatin). 4. Me her sibeh bi hev re taştê (xwarin). 5. Keç di dera mûzîkê de stran (gotin).

Վարժություն 4. Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Անցյալ տարի ամեն օր առավոտյան ես գնում էի դպրոց: 2. Դու միշտ ինձ վրա ծիծաղում էիր: 3. Ամեն օր՝ կեսօրին, ես ճաշում էի: 4. Մեր շունն առավոտից երեկո հաչում էր: 5. Երբ ես տուն եկա, մայրիկը նամակ էր գրում: 6. Ես անցյալ տարի սովորում էի դպրոցում: 7. Երեկ երեկոյան ես կարդում էի: 8. Անցյալ տարի ես ամեն օր գալիս էի ձեր տուն: 9. Փոքր ժամանակ ես պանիր չէի ուտում: 10. Մայրիկս ամեն շաբաթ ինձ տանում էր եկեղեցի: 11. Մենք ապրում էինք գյուղում: 12. Նա միշտ գինի էր խմում: 13. Նա ամեն օր շուտ էր գնում և ուշ էր գալիս: 14. Անահիտը երեխաներին տանում էր դաշտ: 15. Երեկ գիշերը անձրև էր տեղում:

Դաս 3

Անկատար անցյալ (*karin, zanîn, danîn* բայեր)

Karin, zanîn, danîn բայերը անկատար անցյալ ժամանակաձևով խոնարհելիս դրսևորվում են որոշ առանձնահատկություններ:

Karin բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min dikaribû.	Ես կարող էի:
II դեմք	Te dikaribû.	Դու կարող էիր:
III դեմք	Wî/wê dikaribû.	Նա կարող էր:

I դեմք	Me dikaribû.	Մենք կարող էինք:
II դեմք	We dikaribû.	Դուք կարող էիք:
III դեմք	Wan dikaribû.	Նրանք կարող էին:

Ժխտականը կազմվում է *ni-* նախամասնիկով:

I դեմք	Min nikaribû.	Ես չէի կարող:
II դեմք	Te nikaribû.	Դու չէիր կարող:
III դեմք	Wî/wê nikaribû.	Նա չէր կարող:

I դեմք	Me nikaribû.	Մենք չէինք կարող:
II դեմք	We nikaribû.	Դուք չէիք կարող:
III դեմք	Wan nikaribû.	Նրանք չէին կարող:

Zanîn բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min dizanibû.	Ես գիտեի:
II դեմք	Te dizanibû.	Դու գիտեիր:
III դեմք	Wî/wê dizanibû.	Նա գիտեր:

I դեմք	Me dizanibû.	Մենք գիտեինք:
II դեմք	We dizanibû.	Դուք գիտեիք:
III դեմք	Wan dizanibû.	Նրանք գիտեին:

Ժխտական խոնարհում

I դեմք	Min nizanibû.	Ես չգիտեի:
II դեմք	Te nizanibû.	Դու չգիտեիր:
III դեմք	Wî/wê nizanibû.	Նա չգիտեր:

I դեմք	Me nizanibû.	Մենք չգիտեինք:
II դեմք	We nizanibû.	Դուք չգիտեիք:
III դեմք	Wan nizanibû.	Նրանք չգիտեին:

Danîn բայը խոնարհվում է հետևյալ կերպ⁵.

I դեմք	Min datanî.	Ես դնում էի:
II դեմք	Te datanî.	Դու դնում էիր:
III դեմք	Wî/wê datanî.	Նա դնում էր:

I դեմք	Me datanî.	Մենք դնում էինք:
II դեմք	We datanî.	Դուք դնում էիք:
III դեմք	Wan datanî.	Նրանք դնում էին:

Ժխտական խոնարհում

I դեմք	Min danedanî.	Ես չէի դնում:
II դեմք	Te danedanî.	Դու չէիր դնում:
III դեմք	Wî/wê danedanî.	Նա չէր դնում:

I դեմք	Me danedanî.	Մենք չէինք դնում:
II դեմք	We danedanî.	Դուք չէիք դնում:
III դեմք	Wan danedanî.	Նրանք չէին դնում:

Օրինակներ՝

Armên dikaribû zû bê.	Արմենը կարող էր շուտ գալ:
Armên nikaribû (bixwîne) bixûne.	Արմենը չէր կարող կարդալ:
Hasmîkê dikaribû bixûne.	Հասմիկը կարող էր կարդալ:
Min her roj kumê xwe dadani û ji malê derdiketim.	Ես ամեն օր գլխարկս դնում ու տնից դուրս էի գալիս:
Anahîtê dizanibû ku birê wê rast got.	Անահիտը գիտեր, որ իր եղբայրը ճիշտ ասաց:

Derîyên Sûra Amedê

Amed berê di nav sûran de bû. Sûrên Amedê bi dirêjayî û mezinayîya xwe li çar alîyên cîhanê bi nav û deng in. Armanca avakirina sûra Amedê parastina bajêr bû.

⁵ *Danîn*-ը նախաձանցավոր բայ է, բայց քանի որ հաճախ է կիրառվում, նպատակահարմար ենք գտել ներկայացնել բացառություն կազմող բայերի հետ:

Di sêrî de çar derîyên sûra Amedê hebûn. Sê derî jî paşê vebûn, û hejmara derîyan bû heft. Li bakûrê bajêr “Derîyê Çîyê”, li rojava “Derîyê Rihayê”, li başûr “Derîyê Mêrdînê”, li rojhilat “Derîyê Nû” hene.

Ji bilî van derîyan derîyek jî nêzîkî Derîyê Çîyê heye. Vî derîyî ra dibêjin “Derîyê Sarayê”. Du derîyên din jî di demên dawîyê de vebûn.

Çemê Dicleyê ber sûrê ra derbas dibe. Ji ser surê ve Pira Dehderî xuya dike. Li ber çem baxçe hene. Ev baxçe ji ser surê **re** gelekî xweşik xuya dikin.

Վարժություն 1. Պատասխանել հետևյալ հարցերին:

1. Dora bajarê Amedê çi heye? 2. Armanca avakirina sûra Amede çi bû? 3. Çend derîyên sûra Amedê hene? 4. Çeme Dicle kîderê ra derbaz dibe?

Նոր բառեր և կապակցություններ

sûr	ցանկապատ, պարիսպ
di sêrî de (di destpêkê de)	սկզբում, ի սկզբանե
ji bilî, bilî	բացի

Parêzgeha Araratê

Parêzgeha Araratê ji sedî heftê axa komara Ermenîstanê digire. Navenda parêzgehê bajarê Artasat e.

Xaka parêzgeha Araratê du beş e: beşek deşt e û beşek çîya ne. Li Araratê avûhewa germ e. Bi taybetî payîzê gelek tav e, roj dirêj û pir xweş in. Wê demê fêkî dighîjin.

Vê derê bajarê herî mezin bajarê Artasat e. Ew bajar li ser cadeya Yêrêvan-Gorîs e. Di salên dawî de li Artasatê kargehên şerabê, febrîqên hişk kirin û konsêrvekirina fêkiyan hatine avakirin.

Bajarê Artasatê navê xwe ji Artasata dîrokî girtiye ku serokbajarekî Ermenîstanê bû.

Bajarê Ararat, bajarê Masîs û bajarê Vedî jî li vir in. Aboriya parêzgeha Araratê pêşketî ye, bi taybetî çandinî girîng e. Li vir gelek baxçeyên tirîyan, zerdeliyan, hirmîyan û sêvan hene. Ararat wek navenda pîşesazîya giran navdar e: li vir kargeha çimentoyê û kargeha kana zêr heye.

Çemên sereke yên herêmê Araks, Hirazdan, Azat û Vedî ne.

Li Araratê kêmeteweyên neteweyî wek asûrî, rûs, êzdî, yûnanî û kurd dijîn.

Նոր բառեր և կապակցություններ

avûhewa	կլիմա
Fêkî dighîjin.	Մրգերը հասունանում են:
cade	մայրուղի
hişk kirin	չորացնել
pîşesazî	արդյունաբերություն
pîşesazîya giran	ծանր արդյունաբերություն
kargeh	գործարան
çîmento	ցեմենտ
kana zêr	ոսկու հանք
çandînî	երկրագործություն, այգեգործություն
pêşketî	զարգացած
kêmnetewe	փոքրամասնություն
kêmneteweyên neteweyî	ազգային փոքրամասնություն
suryanî, asûrî	ասորի

Դաս 4

Անկատար անցյալ (պատճառական բայեր)

Պատճառական բայերն անկատար անցյալ ժամանակաձևով խոնարհելիս կիրառվում է պատճառական բայերի անցյալի հիմքը: Պատճառական բայերը խոնարհվում են անցողական բայերի նման, այսինքն՝ ենթական թեք հոլովաձևով է, և բայի անցյալի հիմքին դիմային վերջավորություններ չեն միանում:

Xapandin (անցյալի հիմքը՝ **xapand-**) բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min dixapand.	Ես խաբում էի:
II դեմք	Te dixapand.	Դու խաբում էիր:
III դեմք	Wî/wê dixapand.	Նա խաբում էր:

I դեմք	Me dixapand.	Մենք խաբում էինք:
II դեմք	We dixapand.	Դուք խաբում էիք:
III դեմք	Wan dixapand.	Նրանք խաբում էին:

Ժխտականը կազմվում է **ne-** նախամասնիկով:

I դեմք	Min nedixapand.	Ես չէի խաբում:
II դեմք	Te nedixapand.	Դու չէիր խաբում:
III դեմք	Wî/wê nedixapand.	Նա չէր խաբում:

I դեմք	Me nedixapand.	Մենք չէինք խաբում:
II դեմք	We nedixapand.	Դուք չէիք խաբում:
III դեմք	Wan nedixapand.	Նրանք չէին խաբում:

Տkênandin (անցյալի հիմքը՝ **տkênand**) բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min diտkênand.	Ես կոտրում էի:
II դեմք	Te diտkênand.	Դու կոտրում էիր:
III դեմք	Wî/wê diտkênand.	Նա կոտրում էր:

I դեմք	Me diտkênand.	Մենք կոտրում էինք:
II դեմք	We diտkênand.	Դուք կոտրում էիք:
III դեմք	Wan diտkênand.	Նրանք կոտրում էին:

Ժխտական խոնարհում

I դեմք	Min nediškê and.	Ես չեի կոտորում:
II դեմք	Te nediškê and.	Դու չեիր կոտորում:
III դեմք	Wî/wê ne škêand.	Նա չէր կոտորում:

I դեմք	Me nediškê and.	Մենք չեինք կոտորում:
II դեմք	We nediškê and.	Դուք չեիք կոտորում:
III դեմք	Wan nediškê and.	Նրանք չեին կոտորում:

Էրգատիվ կառույցը հատուկ է նաև պատճառական բայերին: Օրինակ՝

Min tu dixapandî.	Ես քեզ խաբում էի:
-------------------	-------------------

Dan բայով պատճառական բայերի դեպքում խոնարհվում է **dan** բայը: **Dan çêkirin** բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min dida çêkirin(ê).	Ես սարքել էի տալիս:
II դեմք	Te dida çêkirin(ê).	Դու սարքել էիր տալիս:
III դեմք	Wî/wê dida çêkirin(ê).	Նա սարքել էր տալիս:

I դեմք	Me dida çêkirin(ê).	Մենք սարքել էինք տալիս:
II դեմք	We dida çêkirin(ê).	Դուք սարքել էիք տալիս:
III դեմք	Wan dida çêkirin(ê).	Նրանք սարքել էին տալիս:

Ժխտական խոնարհում

I դեմք	Min nedida çêkirin(ê).	Ես սարքել չեի տալիս:
II դեմք	Te nedida çêkirin(ê).	Դու սարքել չեիր տալիս:
III դեմք	Wî/wê nedida çêkirin(ê).	Նա սարքել չէր տալիս:

I դեմք	Me nedida çêkirin(ê).	Մենք սարքել չեինք տալիս:
II դեմք	We nedida çêkirin(ê).	Դուք սարքել չեիք տալիս:
III դեմք	Wan nedida çêkirin(ê).	Նրանք սարքել չեին տալիս:

Mehabad

Mehabad bajarekî bi nav û deng e. Mehabad li başûrê Gola Urmîyê ye. Roja îro ew li bakûrê rojavayê Komara Îslamî ya Îranê ye.

Di sala 1945an de bi serokatîya Qazî Mihemed Komara Mehabadê ava bû. Qazî Mihemed ji eşîreke mezin bû. Malbata wî ji terîqa Neqşebendî bû û bi mêrxasîyê navdar bû.

Qazî Mihemed Partîya Demokrat a Kurdistanê ava kir. Di komcivîna neteweyî ya partîyê de Qazî Mihemed got ku divê gelê kurd bibe xwedîyê rêveberîya xwecihî, divê zimanê kurdî bibe zimanê fermî, û gelê kurd gerek di perwerdehîyê de jî zimanê dayîkê bikarbîne. Qazî Mihemed wisa jî got ku pêwîst e ku Qanûna Bingehîn ya taybet bona Kurdistanê Îranê bê qebûlîkirin. Di 22ê Çileyê sala 1946an de li Qada Çarçirayê Komara Kurd a Mehabadê hat îlankirin. Hikumeta nû dest bi xebatên xwe kir û zimanê kurdî wek zimanê fermî îlan kir.

Komara Mehabadê pir dom nekir. Artêşa Îranê berê xwe da Komara Mehabadê. Qazî Mihemed teslîm bû, û di 17ê Kanûna 1946an de artêşa Îranê ket Mehabadê. Bi vî awayî Komara Mehabadê hat xirab kirin. Serokê Komarê Qazî Mihemed û hevalên wî li meydana Çarçirayê hatin dardakirin.

Mehabad di dilê hemû welatparêzên kurdan de dijî.

Նոր բառեր և կապակցություններ

mêrxasî	քաջություն
rêveberîya xwecihî	տեղական ինքնավարություն
perwerdehî	դաստիարակություն, կրթություն
bikaranîn	կիրառել, օգտագործել
qanûna bingehîn	սահմանադրություն
îlan kirin	հայտարարել
teslîm bûn	հանձնվել
welatparêz	հայրենասեր

Վարժություն 1. Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Gundîyan her sal genim diçand. 2. Kevanîyê mast diçeliqand. 3. Simo gelek direvya, diket û lingê xwe diherişand. 4. Xûşka min her sibeh hêk dikeland. 5. Her bahar tavê berf diheland. 6. Keçan xwe dixemiland. 7. Cînara me sibehê heta êvarê goşt diqeland. 8. Min ew xeber digîhand hevalan. 9. Te her dem ez dixapandim. 10. Her sal berî Cejna sala nû zarokan dar dixemiland. 11. We ew dar dixist tendûrê û temam dişewitand. 12. Min her dem av dikeland û çay hazir dikir. 13. Te destên dijmin girê dida û dişidand.

Վարժություն 2. Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Մայրիկն ամեն օր երեխայի հետ զրոսնում էր (բոց,՝ երեխային ման էր տալիս): 2. Դու խաբում էիր բոլորին: 3. Նա գլուխը քորում էր: 4. Քամին ցրում էր (բոց,՝ ցրիվ էր տալիս) ցորենը: 5. Նա հալեցնում էր սաքերի ձյունը և այդ ջուրը խմում: 6. Նա խաբում էր բոլորին: 7. Ամեն առավոտ նա

ձգում էր իր գոտին ու գնում էր որսի: 8. Արմենը դպրոցում իր ընկերուհու մազերը քաշում էր: 9. Ամեն տարի՝ զարնանը, դու հյուրերի հետ զբոսնում էիր սարերում (բոց.՝ հյուրերին ման էիր տալիս սարերում): 10. Թշնամին ռումբեր էր պայթեցնում էր նրանց գլուղերում:

Xurekên Ermenistanê

Aram û Anî ermenî ne. Her du jî xwendekar in û ser xurekên Ermenistanê diaxêvin.

Aram dipirse: “Anî, gelo tu dizanî zebeşên kîjan gundan xweş in?”

Anî bersîv dide: “Welle, zebeşên gundên Armavîrê xweş in. Lê tu zanî gizêrên kîjan gundî xweş in?”

Aram dibêje: “Çawa nizanim. Li Aramûsê gizêrên gelek rind hene. Aramûs gundek e, ew li parêzgeha Kotaykê ye. Lê tu dikarî bêjî mişmiş û xoxên (şifteliyên) kîjan bajarî biçêj in?”

Anî dibêje: “Mişmiş û şifteliyên bajarê Artasatê şîrin û biçêj in. Artasat di parêzgeha Araratê de ye. Derdora Artasatê baxçeyên fêkîyan hene. Tu dikarî bêjî penîrê ku derê rind e?”

Aram dibêje: “Şîr û penîrê Aparanê gelek xweş e. Aparan li parêzgeha Aragatsotnê ye. Gelo tu dizanî tolmeyên kîjan bajarî navdar in?”

Anî bersîv dide: “Tolme û xaş xwarinên gelek bi tam in. Tolme pê goşt, kelem yan belgên tirîyan çêdikin: dibêjin ku tolmeyên Aştarakê xweş in. Xaşa Gyûmrîyê jî gelek navdar e. Tolme û xaş di herêma me de xwarinên hezkirî ne. Lê tu zanî li Gavarê çi xurek navdar e?”

Aram dibêje: “Li Gavarê pexlewe navdar e. Gavar di parêzgeha Gêxarkûnîkê de ye. Dikarî bêjî tirîyên ku derê şîrin in?”

Anî dibêje: “Tirîyên Yêxêgnadzorê gelek xweş in. Li vir şeraba rind jî heye. Yêxêgnadzor di parêzgeha Vayots Dzorê de ye. Ka bêje tirşoyê kîjan gundî navdar e?”

Aram dibêje: “Tirşoyê çîyan navdar e. Ji ber ku li Ermenistanê çîya pir in, tu dikarî hemû cîyan tirşo bibînî. Lê hingivê kîjan bajarî navdar e?”

Anî dibêje: “Li Ermenistanê hemû cîyan jî hingiv heye. Bi taybetî hingivê Lorîyê rind e.”

Aram jî dibêje: “Belê, hingivê Ermenistanê gelek xweş e. Hingiv ji bo tendurustîyê gelek baş e.”

Նոր բառեր և արտահայտություններ

biçêj	հավեղ
Tu dizanî.	Դու գիտես:
tam	համ

Ka bêje!	Հապա աաա՛ :
tiršo	ավելուկ
Tu dikarî.	Դու կարող ես:
bi taybetî	հատկապես

Վարժություն 3. Հետևյալ պատճառական բայերը խոնարհել անկատար անցյալ ժամանակաձևով և կազմել նախադասություններ:

	Պատճառական բայ	Բայի անցյալի հիմք
փորձել	cêribandin	cêriband-
ստեղծել	efirandin	efirand-
ցավեցնել	êşandin	êşand-
ման տալ	gerandin	gerand-
շարժել	hejandin	hejand-
հալեցնել	helandin	heland-
եփել, խաշել	kelandin	keland-
քաշել	kişandin	kişand-
պոկել	qetandin	qetand-
շաղ տալ	reşandin	reşand-
վազեցնել, փախցնել	revandin	revand-
պայթեցնել	teqandin	teqand-
խաբել	xapandin	xapand-
քորել	xurandin	xurand-
ամուսնացնել	zewicandin	zewicand-
արածեցնել	çêrandin	çêrand-

Parêzgeha Vayots Dzorê

Parêzgeha Vayots Dzorê yek ji parêzgehên Ermenistanê ye. Ev parêzgeh ne pir mezin e. Ji alîyê nifûsê ve ev parêzgeha herî biçûk e.

Di demên kevnare de jî mirov li Vayots Dzorê diman. Di lêkolînan de li Vayots Dzorê tiştên pêşdîrokî hatine dîtin, wek xencerên serdema tûnc, sîlih, gustîlk û tiştên din.

Li parêzgehê gelîyên fireh û kûr, çîyayên bilind hene. Rêyên ku Vayots Dzorê bi parêzgehên cîran ra girê didin, nav çîyayên bilind re derbas dibin.

Navenda îdarî ya Vayots Dzorê Yêxêgnadzor e, ku mezintirîn bajarê parêzgehê ye. Vayk û Cêrmûk jî bajarên din ên Vayots Dzorê ne. Li

Cêrmûkê gelek merkez û navendên tenduristîyê û geştûgerê hene. Li gorî amarên sala 2023an, piraniya nifûsa parêzgehê ermenî ne.

Şaxê sereke yê aborîyê li Vayots Dzorê çandinî û bi taybetî rezvanî ye. Vayots Dzor yek ji çar herêmên şerabê yên Ermenîstanê ye, ku bi kevneşopîyên xwe yên kevnar bona çêkirina şerabê navdar e. Şeraba “Arênî” li vir ji cureyekî tirîyan bi navê “Arênî” çêdikin.

Նոր բառեր և արտահայտություններ

kevnare	հնագույն
pêşdîrokî	նախապատմական
Ew hatine dîtin.	Դրանք գտնվել են:
serdema tûnc	բրոնզե դար
xencer	դաշույն
sîleh	զենք
gustîlk	մատանի
îdarî	վարչական
Ew girê didin.	Դրանք կապում են:
navenda îdarî	վարչական կենտրոն
tenduristî	առողջություն
geştûger	գրասաշրջություն
li gorî	ըստ
amar	վիճակագրություն
aborî	տնտեսություն
rezvanî	խաղողագործություն
kevneşopî	ավանդական
Ew çêdikin.	Նրանք պատրաստում են:

Դաս 5

Անկատար անցյալ (բաղադրյալ բայեր)

Բաղադրյալ բայերը անկատար անցյալ ժամանակաձևով խոնարհելիս հարկ է հաշվի առնել դրանց անցողական, անանցողական, պատճառական լինելը:

Rûniştin անանցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Ez rû dini ştim.	Ես նստում էի:
II դեմք	Tu rû dini ştî.	Դու նստում էիր:
III դեմք	Ew rû dini şt.	Նա նստում էր:

I դեմք	Em rû dini ştin.	Մենք նստում էինք:
II դեմք	Hûn rû dini ştin.	Դուք նստում էիք:
III դեմք	Ew rû dini ştin.	Նրանք նստում էին:

Բաղադրյալ բայերի ժխտականը կազմելիս **ne-** նախամասնիկը կիրառվում է բայի երկրորդ բաղադրիչից առաջ, **di-** նախամասնիկը պահպանվում է:

I դեմք	Ez rû nedini ştim.	Ես չէի նստում:
II դեմք	Tu rû nedini ştî.	Դու չէիր նստում:
III դեմք	Ew rû nedini şt.	Նա չէր նստում:

I դեմք	Em rû nedini ştin.	Մենք չէինք նստում:
II դեմք	Hûn rû nedini ştin.	Դուք չէիք նստում:
III դեմք	Ew rû nedini ştin.	Նրանք չէին նստում:

Bilind bûn (անցյալի հիմքը՝ **bilind bû-**) անանցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Ez bilind dib ûm.	Ես բարձրանում էի:
II դեմք	Tu bilind dib ûy(i).	Դու բարձրանում էիր:
III դեմք	Ew bilind dib û.	Նա բարձրանում էր:

I դեմք	Em bilind dib ûn.	Մենք բարձրանում էինք:
II դեմք	Hûn bilind dib ûn.	Դուք բարձրանում էիք:
III դեմք	Ew bilind dib ûn.	Նրանք բարձրանում էին:

Ժխտական խոնարհում

I դեմք	Ez bilind nedibûm.	Ես չեի բարձրանում:
II դեմք	Tu bilind nedibûy(î).	Դու չէիր բարձրանում:
III դեմք	Ew bilind nedibû.	Նա չէր բարձրանում:

I դեմք	Em bilind nedibûn.	Մենք չէինք բարձրանում:
II դեմք	Hûn bilind nedibûn.	Դուք չէիք բարձրանում:
III դեմք	Ew bilind nedibûn.	Նրանք չէին բարձրանում:

Vekirin (անցյալի հիմքը՝ **vekir-**) անցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min vedikir.	Ես բացում էի:
II դեմք	Te vedikir.	Դու բացում էիր:
III դեմք	Wî/wê vedikir.	Նա բացում էր:

I դեմք	Me vedikir.	Մենք բացում էինք:
II դեմք	We vedikir.	Դուք բացում էիք:
III դեմք	Wan vedikir.	Նրանք բացում էին:

Ժխտական խոնարհում

I դեմք	Min venedikir.	Ես չեի բացում:
II դեմք	Te venedikir.	Դու չէիր բացում:
III դեմք	Wî/wê venedikir.	Նա չէր բացում:

I դեմք	Me venedikir.	Մենք չէինք բացում:
II դեմք	We venedikir.	Դուք չէիք բացում:
III դեմք	Wan venedikir.	Նրանք չէին բացում:

Hîn kirin (անցյալի հիմքը՝ **hîn kir-**) անցողական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դեմք	Min hîn dikir.	Ես սովորեցնում էի:
II դեմք	Te hîn dikir.	Դու սովորեցնում էիր:
III դեմք	Wî/wê hîn dikir.	Նա սովորեցնում էր:

I դեմք	Me hîn dikir.	Մենք սովորեցնում էինք:
II դեմք	We hîn dikir.	Դուք սովորեցնում էիք:
III դեմք	Wan hîn dikir.	Նրանք սովորեցնում էին:

Ժխտական խոնարհում

I դերք	Min hîn nedikir.	Ես չեի սովորեցնում:
II դերք	Te hîn nedikir.	Դու չեիր սովորեցնում:
III դերք	Wî/wê hîn nedikir.	Նա չէր սովորեցնում:

I դերք	Me hîn nedikir.	Մենք չէինք սովորեցնում:
II դերք	We hîn nedikir.	Դուք չէիք սովորեցնում:
III դերք	Wan hîn nedikir.	Նրանք չէին սովորեցնում:

Paşda kişandin (անցյալի հիմքը՝ **pêşda kişand-**) պատճառական բայը խոնարհվում է հետևյալ կերպ.

I դերք	Min paşda dikişand.	Ես հետ էի քաշում:
II դերք	Te paşda dikişand.	Դու հետ էիր քաշում:
III դերք	Wî/wê paşda dikişand.	Նա հետ էր քաշում:

I դերք	Me paşda dikişand.	Մենք հետ էինք քաշում:
II դերք	We paşda dikişand.	Դուք հետ էիք քաշում:
III դերք	Wan paşda dikişand.	Նրանք հետ էին քաշում:

Ժխտական խոնարհում

I դերք	Min paşda nedikişand.	Ես հետ չեի քաշում:
II դերք	Te paşda nedikişand.	Դու հետ չեիր քաշում:
III դերք	Wî/wê paşda nedikişand.	Նա հետ չէր քաշում:

I դերք	Me paşda nedikişand.	Մենք հետ չէինք քաշում:
II դերք	We paşda nedikişand.	Դուք հետ չէիք քաշում:
III դերք	Wan paşda nedikişand.	Նրանք հետ չէին քաշում:

Du heval

Carekê du heval rûniştin ku nê n bixwin. Hevalek zehf zikû (pirxwar) bû. Wî dixwast hevalê xwe bide xebordanê û temam nan-xwarinê bixwe. Ser nê n ji hevalê xwe pirs kir, go: “Filankes, bavê te çawa mir? Kengê mir? Ku mir? Ji çi mir?”

Hevalê wî destpê kir bi xavê û bi temamî, hûrgilî şirove kir. Heta wî şirovedikir, yê din nan-xwarin temam xwar, hevalê wî birçî ma.

Êvarê, wexta ku rûniştin ser nê n, îja yê ku nîvro birçî mabû, xwast usa serê hevalê xwe bike. Wî ji hevalê xwe pirs kir, go: “Filankes, lê bavê te çawa mir? Ji çi mir? Kengê mir? Ku mir?”

Hevalê wî gotê: “Qet, bavê min kal bû, wextê wî hat, nexweş ket, mir. Me bir, veşart, pişta xwe dayê, hatin.”

Usa kurt giliyê xwe birî, destpêkir nên bixwe.

Նոր բառեր և արտահայտություններ

Ew rûniştin ku nên bixwin.	Նրանք նստեցին, որպեսզի հաց ուտեն:
pirxwar	շատակեր
Ew dixwaze bixwe.	Նա ուզում է ուտել:
hûrgilî	մանրամասն
şirove kirin	բացատրել, մեկնաբանել

Վարժություն 1. Հետևյալ բայերը խոնարհել անկատար անցյալ ժամանակաձևով և կազմել նախադասություններ:

	Անորոշ դերբայ	Բայի անցյալի հիմք
հավատալ	bawer kirin	bawer kir-
բաժանել	belav kirin	belav kir-
փակել, ծածկել	dadan	dada-
լցնել	dagirtin	dagirt-
կազմակերպել	damezirandin	damezirand-
անցնել	derbaz bûn	derbaz bû-
դուրս գալ	derketin	derket-
հանել	derxistin	derxist-
սկսել	dest pê kirin (destpê kirin)	dest pê kir- (destpê kir-)
ձեռք բերել, ճարել	dest xistin	dest xist-
հարձակվել	êrîş kirin	êrîş kir-
վերցնել	hildan	hilda-
ցույց տալ	nîşan dan	nîşan da-
պատմել	qise kirin	qise kir-
վեր կենալ	rabûn	rabû-
քնել	raketin	raket-
կանգնել, կանգ առնել	rawestin (rawestîn)	rawestya-
փռել	raxistin	raxist-
քնել	razan	raza-
տապալվել, ձախողվել	têkçûn	têkçû-

փորել	vedan	veda-
հյուսել	vegirtin	vegirt-
բացել	vekirin	vekir-
անջատել	vêsandin	vêsand-
թաքցնել	veşartin	veşart-
անջատվել	vêsin	vêsy-
վառել, միացնել	vêxistin	vêxist-
խմել	vexwarin	vexwar-
շրջել, շուռ տալ, թարգմանել	wergerandin (welgerandin)	wergerand- (welgerand-)
շրջվել, շուռ գալ	wergerîn (welgerîn)	wergerya-(welgerya-)
ստիպել, ճնշել (որևէ մեկին)	zor pê kirin	zor pê kir-

Վարժություն 2. Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Hûn her sibeh, saeta çendan radibûn? 2. We her sibeh kîjan pencere vedikir? 3. Gelo cînar dereng radizan? 4. Em rûdiniştin ser keviran. 5. Miraz her roj çi saetê vedigerya? 6. Min wî çaxî li qehwexanê çay û qehwe vedixwar. 7. Piştî xebatê min tîlêvîzyon vêdixist û lê dinihêrî. 8. Tu carna ji dersê dereng vedigeryay. 9. Kalo rûdinişt ser kursîyê û şerab vedixwar. 10. Te her roj zaroka xwe hildigirt û digerland. 11. Te her roj saeta pêncâ zarokên xwe radizand.

Վարժություն 3. Թարգմանել հետևյալ նախադասությունները:

1. Դու իջեցնում էիր հեռուստացույցի ձայնն ու նստում էիր կողքիս: 2. Երբ փոքր էի, մայրիկս հյուսում էր իմ մազերը: 3. Ուսանողներն ամեն օր ուշ էին վերադառնում: 4. Նա ամեն առավոտ սուրճ էր խմում: 5. Մայրիկը թափ էր տալիս երեխայի շորերն ու դնում աթոռին: 6. Նա մի կերպ կուլ էր տալիս հացի պատառը և ժպտում էր: 7. Նա կարդում էր իմ գրքերը, հետո վերադարձնում էր: 8. Ամեն տարի՝ զարնանը, ես տատիկիս հետ սար էի գնում: 9. Ամեն առավոտ ես դուրս էի գալիս տնից և մի ժամ վազում: 10. Երբ անձրև էր գալիս, դու մեքենայի ապակին իջեցնում էիր և դուրս նայում:

Tebîyet

Li dora me çîyayên bilind bûn. Berf dûr va ber tavê diçirûsî. Xulîna avê bû. Av jor da dihat xwarê, berbi deştan dikişîya. Li erdê hêşînayîyê serê xwe derdixist. Çiqilên daran hêşîn dibûn, gupik didan. Zarokên cînaran kincên

reng-rengî li xwe **dikirin** û **derdiketin** derva. Ew devken û beşerxweş bûn. Cotkaran cot dikir. Ber malan mirîşk û qaz dikirin qibeqib. Jorê, li ezmana teyr û çivîk baskên xwe vedikirin û difirîn. Te tirê wan elam dikir wekî bihar hat ser rûyê dinyayê.

Նոր բառեր

çirûsîn	փայլել, կայծկլտալ
xulîn	խշոց
cew, erq	առու
hatin xwarê	ցած իջնել
devken	ժպտադեմ
qaz	սագ
bask	բազուկ, թև

Երկխոսություն

- Selam, taxtor.
- Aleykûm selam! Navê te bi xêr?
- Navê min Şêxmûs Pehlewan e.
- Kîdera te dêşe? Çi derdê te heye?
- Bi Xwedê, hemû derên min dêşin.
- Ma tu dixebitî?
- Erê, karê min giran e. Ez barên giran cî diguhêzim.
- Serê te dêşe?
